

Ի Ճ Խ Ա Ն Ո Ւ Հ Ի

(Ան. Զեխովի)

* Վանքի ալսպէս կոչուող «Կարմիր» դարբասից ներս մտաւ չորս գեղեցիկ, խնամքով պահուած առողջ նժոյզներով մի փառաւոր քառաձի կառք։ Հիւրատանը բարձրաստիճան հիւրերին ընդունելու բաժնի մօտ կանդնած արեղաներն ու մոնթերը դեռ հեռուից ճանաչեցին՝ կառապանից ու ձիերից այն տիկնոջը, որ բազմած էր կառքի մէջ, իրենց քաջածանօթ իշխանուհի-Վէրա Դաւրիլովնալին։

Նշանազգեստ հագած ծերուկ ծառան ցած թռաւ կառապանի կողքից և օգնեց իշխանուհուն՝ կառքից իշնել։ Նա բարձրացրեց թանձր քողը և յամրաքալլ մօտեցաւ ըոլոր արեղաներին՝ օրհնութիւն ստանալու, ապա սիրալիր ողջունեց մոնթերին և դիմեց դէպի իւր համար պատրաստած բնակրասնը։

— Հ՞ր, կարօտեցիք ձեր իշխանուհուն, ձանձրանում էիք առանց նորան, — ասում էր իշխանուհին իրեղները ներս բերող վանականներին։ — Ամբողջ ամիս է ձեզ մօտ չեմ եղել։ Վերջապէս եկամ. լաւ նայեցէք ձեր իշխանուհուն։ Խսկ ուր է վանահալրը։ Աստուած իմ, անհամբերութիւնն ինձ խեղդում է։ Պատուական, հիանալի ծերուկ է։ Դուք պէտք է պարծենաք, որ ալդպիսի վանահալր ունիք։

Երբ վանահալրը ներս մտաւ, իշխանուհին ոգեսորուած բացականչեց, խաչեց ձեռները կրծքի վրայ և մօտեցաւ օրհնութիւն ստանալու։

— Ոչ, ոչ։ Թողլ տուէք համբուրեմ, — ասաց նա և առնելով նրա աջը ու երեք անգամ ագահաբար համբուրելով, — Օ՛, որչափ ուրախ եմ, սուրբ հալր, որ

վերջապէս տեսնում եմ ձեզ։ Դուք, ովք գիտէ, մոռացել էլ էք ձեր իշխանուհուն, իսկ ես ամեն ըսպէ մըտքով ձեր հիանալի վանքումն էի։ Որչափ լաւ է ձեզ մօտ։ Աստծուն միայն նուիրած այս կեսնքը, հեռու աշխարհին ունալինութիւնից, — այս ամենը մի առանձին հրապոյր ունի, հայր սուրբ, որ ես զգում եմ ամբողջ հոգուս զօրութեամբ, բայց բացատրել բառերով՝ անկարող եմ։

Իշխանուհու ալտերը վառւում էին, աչքերի մէջ արցունք էր ցոլում։ Խօսում առանց դադար առնելու, ջերմ, իսկ վանահայրը՝ մօտ 70 տարեկան մի ծերունի, լուրջ, տգեղ դիմագծերով և ամօթխած, լուռ էր և երբեմնակի միայն հատ հատ բառեր էր թուցնում, զինուորականի արտալայտութիւններով։

— Ճիշդ այդպէս է, ձերդ պայծառափալլութիւն... այդպէս է... հասկանալի է...»

— Երկար ժամանակ կը հաճիք մնալ մեզ մօտ, — հարցը նա։

— Այսօր ձեզ մօտ կգիշերեմ, իսկ վաղը կերթամ կաւդիս նիկոլաևնալի մօտ, — վաղուց է իրար չենք տեսել, իսկ հետևեալ օրը նորից ձեզ մօտ կվերադառնամ և կմնամ մի երեք-չորս օր։ Կամենալի ալստեղ՝ ձեզ մօտ հոգեպէս հանգստանալ...»

Իշխանուհին սիրում էր լինել վանքում։ Վերջին երկու տարին նորան շատ էր դուր եկել ալդ տեղը և համարեա ամս ոռւայ իւրաքանչչւր ամիս գալիս էր այնտեղ և մնում երկու, երեք օր, նոյն իսկ մի շաբաթ։ Հեղահամբոյր մոնթերը, լուռութիւնը, ցածրիկ առաստաղները, նոճենու բոլը, համեստ նախաճաշը, լուսամուտների էժանադին վարագոյնները, — այս բոլորը նորան գրաւում, քնքանք էին ներշնչում և տրամադրում անուրջներով երազելու և լաւ-լաւ մտքերով սընուելու։ Բաւական էր, որ վանական հիւրատան սենեակներում մի կէս ժամ մնար, որ նորան թուար, թէ ինքն ևս հեղահամբոյր է և համեստ, որ իրենից ևս նոճու հոտ էր գալիս։ անցեալը հեռանում-փախչում էր, կորցնում էր իւր արժէքը և իշխանուհին սկսում էր մտածել, թէ չնայելով որ ինքը միայն 29 տարեկան է,

բայց շատ նման է ծերունի վանահօրը և ինքն ևս՝ նորա պէս ծնուած է ոչ հարստութեան համար և ոչ էլ երկրալին փառք ու սէր վալելելու, այլ մի խաղաղ, մթնաշաղով պատած, աշխարհից հեռու կետնքի համար, ինչպէս արդ սենեակները...

Պատահում է, որ աղօթքների մէջ խորասուզուած ճգնաւորի խաւարտչին խուցն է սպրդում, յանկարծ, տրեգակի պայծառ շողը կամ խցի լուսամուտի առաջ մի թռչնակ կընսուէ և կերգէ իւր մեղեդին. դաժան ճըգնաւորը ակամալից կըժպտալ և նորա կուրծքից՝ մեղքերի ծանր ապաշաւանքի տակից, ինչպէս մի ծանր քարի տակից, յանկարծ անմեղ զուարթութիւնը դուրս կըդիէ, որպէս հեզիկ մի առուակի. Իշխանուհուն այնպէս էր թւում, որ ինքը գրսի աշխարհից իւր հետ է բերել ճիշդ ալդպիսի մի միսիթարութիւն, ինչպէս արեգակի շող կամ թռչնակի նորա սիրալիր, ուրախ ժպիտը, հեզիկ հայեացքը, ձայնը, կատակները, և ընդհանրապէս ինքը՝ փոքրիկ, գեղեցիկ կազմուածքով, հասարակ սև զգեստով, իւր երևալով պէտք է արդ պարզ, չարքաց մարդոց մէջ ուրախութեան և հրճուանքի զգացում շարժէր. Իրեն նարող ամեն-մէկը պէտք է մտածէր. «Աստուած մեզ համար մի հրեշտակ է ուղարկեց... Եւ՝ զգալով, որ իւրաքանչիւր ոք ակամալից արդ է մըտուծում, նա խնդում երես էր դառնում և աշխատում էր թռչնակի նմանուիլ:

Թէ՛ վալելելով և հանդիստ առնելով, նա ելաւ զբօսնելու. Արևն արդէն մալր էր մտնում. Վանքի ծաղկոցից իշխանուհու հոտոտելիքները հէնց նոր ջրած յափուկի խոնաւ բոլըն առան. եկեղեցուց լսում էր արական ձայների երգեցողութիւնը, որ հեռուից շատ ախորժ և սրտաշարժ էր թւում: Գիշերապաշտօն էր կատարւում: Կանթեղների առկայծող հեզիկ լուսով լուսաւորուած մութ լուսամուտներում, թանձրացած ըստուերների, եկեղեցու գաւթի մուտքի առաջ եղած պատկերի մօտ նստող ծերուկ վանականի դէմքի վրայ այնքան անվրդով խաղաղութիւն էր պատկերացած, որ իշխանուհուն յանկարծ ինչոր լալու զգացում տիրեց...

Իսկ դարբասից դուրս, պարսպի և ցարասիների ծա-

ոռւղում, ուր նստարաններ էին դրուած, արդէն կատարեալ երեկոյ էր: Օդը արագ, շատ արագ մթնում էր... Իշխանուհին անցաւ ծառուղով, նստեց նստարաններից մէկի վրայ և մտածմունքի մէջ ընկաւ:

Նա մտածում էր, թէ որչափ լաւ կլինէր, որ ամբողջ կեանքն այս վանքում անցնէր, որտեղ կեանքն այնքան խաղաղ և անվրդով է, ինչպէս այս ամառալին երեկոն. լաւ կլինէր բոլորովին մոռանալ ապերախտ, անառակ իշխանին, իւր ահագին կտլուածները, պարտաւէրերը, որոնք ամեն օր գրուխ են տանում, իւր գժբաղդութիւնները, իւր աղախնին, որ այսօր այնքան պրտկերս էր ալսօր: Նատ լաւ կլինէր, եթէ ամբողջ կեանքն այս նստարանի վրայ նստէր և ցարասիների ըների արանքից նալէր, թէ ինչպէս ներքեսում՝ լեռան ստորոտում երեկոյեան մառախուղի քուլաները դէս ու դէն են գընում, թէ ինչպէս հեռուում, անտառի գլխով, սև ամպի պէս, որ կարծես թանձը քող լինէր, սարիկները իրենց գիշերալին հանգրուանն են դիմում. ինչպէս այն երկու մոնթերը՝ մէկը աշխէտը հեծած, միւսը հետիոտնձիերը գիշերանոցն են քշում, և ուրախացած, որ մի քիչ ազատ են, փոքրիկ չարաճճիների պէս չարութիւններ են անում. նոցա երկտասարդական զիլ ձայնը տարածւում է անշարժ օդի մէջ բարձր, շատ բարձր և իւրաքանչիւր բառ կարելի է որոշել: Նատ լաւ է նըստել և լսողութիւն դարձած ականջ դնել ալդ անդորրութեան,— մէկ քամին լանկարծ կիչէ և կտաղալ ծառերի կատարների հետ, մէկ գորաը կըցատկտէ և կըխշացնէ հերուալ խաղալը, մէկ պարսպի միւս կողմը պատի ժամացոյցի քառորդներ զարկելու ձայնը կառնես... Մարդ նստէ անշարժ, ականջ դնէ և մտածէ, մտածէ ու մտածէ...

Մօտիկից անցաւ մի պառաւ՝ պարկը ուսին: Իշխանուհին մտածեց, որ լաւ կլինէր կանգնեցնել այս պառաւին և մի սերալիք, սրտազեղ բան ասել, օգնել նորան... Բայց պառաւը մի անգամ իսկ յետ չնայեց և շուռ տուեց ճանապարհը:

Մի քիչ յետոյ ծառուղում երևեցաւ մի բարձրահասակ, ալեխառն մորուսով և յարդեալ գլխարկով տղա-

մարդ։ Հաւասարուելով իշխանուհուն, նա գլխարկ հանեց և ողջունեց, և նորա մեծ ճաղատից, և սրածալը, արծուեռունկ քթից իշխանուհին ճանաչեց, որ դա պը-ժիշկ Միխալիլ իշխանովիշն էր, որ մի հինգ տարի առաջ ծառայում էր իւր մօտ՝ կազնուտում։ Յիշեց, որ լսել էր մէկից, թէ անցեալ տարի վախճանուել էր բժշկի ամուսինը և նա ցոնկութիւն զգաց ցաւակցութիւն լալտ-նել, միխթարել նորան։

— Բժիշկ, գուք, երեի ինձ չճանաչեցք, — հար-ցրեց նա, բարեհամբոլը ժպիտով։

— Ոչ, իշխանուհի, ճանաչեցի, — ասաց բժիշկը, նորեց գլխարկ հանելով։

— Ե՞ս, լաւ ուրեմն, շնորհակալ եմ. ապա թէ ոչ, ես կարծեցի թէ մոռացել էք ձեր իշխանուհուն։ Մար-դիկ, առհասարակ, լիշում են իրենց թշնամիներին, իսկ բարեկամմաներին մոռանում են։ Դուք էլ էք եկել ուխտի։

— Ես ալոտեղ ամեն շաբաթ գիշերում եմ, ի պաշ-տօնէ։ Ես ալստեղի բժիշկն եմ։

— Ե՞ս, ինչպէս էք ապրում, — հարցրեց իշխանուհին հառաչելով։ Ես լսեցի, որ ձեր ամուսինը վախճանուել է։ Ինչ մեծ դժբաղտութիւն։

— Այո՛, իշխանուհի, ինձ համար մեծ դժբաղտու-թիւն է այդ։

— Ի՞նչ արած։ Պէտք է հնազանդութեամբ կրենք դժբաղտութիւնները։ Առանց նախախնամութեան կամ-քի մարդու գլխից մի մազ անդամ չէ պակսում։

— Այո՛, իշխանուհի։

Իշխանուհու սիրալիր, հեզահամբոլը ժպիտներին և նորա հառաչանքներին բժիշկը սառ և չոր-չոր — ւալ՛, իշխանուհի։ Էր պատասխանում, Եւ նորա դէմքի ար-տալատութիւնն էլ շատ սառը և դաժան էր։

«Ի՞նչ մի ալնպիսի բան ասեմ նորան» — մտածում էր իշխանուհին։

— Բայց որքան ժամանակ է մենք իրար չենք տե-սել։ — Հինգ տարի։ Որքան ջուր է անցել, ալդքան ժա-մանակում, կամըջի տակից։ որքան փոփոխութիւններ են կատարուել, նոյն իսկ մտածելն անդամ մարդու սարսա-փեցնում է։ Դուք գիտէք, ես մարդու գնացի... կոմսու-

հուց իշխանուհի դարձալու Եւ արդէն ամուսնուցս բաժանուեցալ տնգամ.

— Այո, ես յսել եմ:

— Աստուած ինձ շատ փորձութիւններ ուղարկեց: Դուք, անզուշտ, նոլնպէս լսել էք, որ ես համարեա քարուքանդ եղալ: Իմ չարաբաստիկ ամսւսնուս պարտքերի պատճառով իմ երեք գիւղերս էլ ծախեցին: Մնաց միայն երկուսը: Զարհուրում եմ անցեալիս վրայ յետ նայեմ, — քանի քանի փոփոխութիւններ, զանտղան դըժքաղտութիւններ, քանի սխալներ:

— Այո, իշխանուհի, բազմաթիւ սխալներ:

— Իշխանուհին մի փոքր շփոթուեցաւ: Ինքը լաւ գիտէր իւր սխալները. և նոքա բոլորն էլ մինչ այն աստիճան հմտակա լարաբերութիւններ են եղել, որ միայն ինքը կարող է գիտենալ և խօսել ու մտածել նոցա մասին: Նա չկարողացաւ համբերութիւնը պահել և հարցեց.

— Ի՞նչ սխալների մասին էք ասում:

— Դուք լիշտակեցիք ալդ մասին, կնշանակէ, գիտէք... պատասխանեց բժիշկը և քմծիծաղ տուեց: — Զարծէ ալդ մասին:

— Ոչ, ասացէք, բժիշկ: Ես ձեզ չափազանց շնորհապարտ կլինիմ: Եւ, կիսնդրեմ, առանց քաշուելու: Ես սիրում եմ ճշմարտութիւննը լսել:

— Ես ձեր դատաւորը չեմ, իշխանուհի:

— Դատաւորը չէք: Ի՞նչ ոճով էք խօսում, կնշանակէ, մի բան գիտէք: Ասացէք:

— Եթէ ցանկանում էք, համեցէք: Միայն, դըժքախտաբար, խօսելու ձիրք չունիմ և ինձ, շատ տնգամ, դժուար է լինում հասկանալ:

Բժիշկը մտախոհութեան մէջ ընկաւ և սկսեց.

— Սխալները բազմաթիւ են. բայց, ըստ իս, նոցանից ամենագլխաւորը, այն ընդհանուր ոգին էր, որով... որը տիրում էր ձեր բոլոր կալուածներում: Տեսնում էք. չեմ կարողանում, մտքերս արտայալտել: Այսինքն գլխաւորն այն սիրոյ բացակալութիւնը, դէպի մարդիկ ունեցած ատելութիւնն էր, որ ամեն բանի մէջ ալնքան դրականապէս աչքի էր ընկնում. Այդ ա-

տելութեան վրայ էր հիմնուած կեանքի ամբողջ կարգաւո-
րութիւնը, Ատելութիւն դէպի մարդկալին ձայնը, դէմքը,
ծոծրակները, քալիերը... միով բանիւ դէպի այն ամենը,
ինչ որ կազմում է մարդ ասածդ: Բոլոր դռների առաջ, և
բոլոր սանդուղտների գլխին կանգնած յափրացած, կուշա,
կոպիտ և ծոլլ բարապաններ, իրենց նշանազգեստներով,
որպէս զի տուն :թողնեն անպատշաճ հագնուած մար-
դոց, նախասենեակներում դրուած են. բարձրաթիկունք
աթոռներ, որպէս զի պարահանդէսների և ընդունելու-
թիւնների ժամանակ ծառաները իրենց ծոծրակներով
պատերի պաստառները չաղտուեն. բոլոր սենեակներում
խաւոտ գորգեր են փռած, որպէս զի ոտնաձայն չլսուի.
իւրաքանչիւր եկողի անպատճառ զգուշացնում են, որ
նա խօսի հանդարտ և որչափ կարելի է քիչ և այնպիսի
քան չասէ, որ կարող է վատ աղբել երեակալութեան
և զղերի վրայ: Իսկ ձեր առանձնասենեակում մարդու
ձեռք չեն տալիս և չեն հրամցնում նստելու, ճիշտ այն-
պէս, ինչպէս ալժմ դուք ինձ ձեռք չառիք և չհրա-
ւիրեցիք նստելու...

—Հրամեցէք, եթէ կամենում էք, —ասաց իշխա-
նուհին և ժպաերես ձեռքը մեկնեց: —Յիրաւի, ինչպիսի
դատարկ բաների համար մարդիկ կարող են նեղանալ...

—Բայց միթէ ես նեղանում եմ, —ծիծաղեց բժիշկը,
բայց հէնց նոյն բոպէին բռնկուեցաւ, գլխարկը հանեց
և, թափահարելով, սկսեց տաք-տաք խօսել: —Նիտակն
ասած, ես վաղուց էի մի դէպի որոնում, որ ձեզ ասեմ
ամեն բան, բոլորը, բոլորը... Այսինքն ես ուզում եմ
ասել, որ բոլորի վրայ դուք նալում էք նապօլէսնա-
կան տեսակէտով, ինչպէս թնդանօթի մսակտորների վր-
բայ: Բայց, գոնէ, նապօլէսնը մի որոշ գաղափար ունէր,
իսկ գուք, բացի զգուանքի զգացումից, ոչինչ չունիք:

—Ես զգուանք եմ զգում դէպի մարդիկ, —ժպատաց
իշխանուհին, զարմանքով ուսերը շարժելով: —Ալն էլ
ես...

—Այո, դուք: Փաստեր են պէտք է ձեզ: Համեցէք:
Ձեր գիւղերից մէկում ողորմութիւն հաւաքելով են ապ-
րում ձեր նախկին խոհարաններից երեքը, որոնք ձեր
խոհանոցի կրակի տաքութիւնից են կուրացել: Ձեր տաս-

նեակ հազարաւոր գեսեատին հողերի վրայ ապրող ամենից աւելի առողջ, ուժեղ, գեղեցիկ տարրը, գուշ և կամ ձեր պահապահները խլել, բերել էք, որ ինչ է բարապան, ծառալ, կառապան դարձնէք: Ալդ երկոտանի կենդանիներին՝ ամենքն էլ կրթուել են «գեադայութեան» մէջ, կերել հաստացել, կոպտացել, մի խօսքով կորցրել են մարդկային կերպարանք ու պատկեր և... երիտասարդ բժիշկներին, գիւղատնաեսներին, ուսուցիչներին և առհասարակ կրթուած բանուորներին ձգում են գործից, Աստուած իմ, զրկում ազնիւ աշխատանքից և մի կտոր հացի խնդրի համար ստիպում մասնակցել այնպիսի զանազան տեսակի «տիկնիխաղերի», որից իւրաքանչիւր մարդավարի մարդ ամօթից գետին կմտնի: Երիտասարդի մէկը, որ դեռ երեք տարի էլ չի ծառալել, այնպիսի կեղծուորի, ստորաքարշի, քսու, անպիտանի մէկն է դառնում, որ... Լաւ բաներ են սոքա: Բոլոր ձեր լեհկառավարիչները, ալդ ստոր լրտեսները, բոլոր ալդ կազիմիրներն ու Կալէտանները առաւօտից մինչև երեկոյ տասնեակ հազարաւոր գեսեատին հողերն են չափչում: և ուզում հորթը գուրս քաշել եղան տակից, ինչ է ձեզ դուր գան: Ներեցէք, ես խօսում եմ առանց որ և է կապակցական եղանակի, բայց ալդ նշանակութիւն չունի: Հասարակ գիւղացուն, ժողովրդին ձեզնում մարդշեն համարում: Բայց՝ նոյն իսկ այն իշխանները, կոմսերը, արհիները, որոնք գալիս գնում էին ձեզ մօտ, գուշ միայն իբր գեղեցիկ գեղոյլը էիք համարում և ոչ կենդանի մարդիկ: Բայց ամենից գլխաւորը... գլխաւորը որ ինձ ամենից աւելի զալրութ է պատճառում, — միլիոնից աւելի կարողութիւն ունենալ և ոչինչ չանել մարդիկների համար, ոչինչ...

Իշխանուհին նստած էր զարմանքից քարացած, սարսափահար, վիրաւորուած և չէր իմանում՝ ինչ ասէր և կամ ինչ դիրք բռնէր: Երբէք, ոչ մի ժամանակ իւր հետ ալդ լեզուով չէին խօսացել: Բժշկի անդուր, զալրացկոտ ձախնը և անհարթ, կակազ ձառը նորա ականջներում և գլխում մի սուր, հարուածող ժխոր էր առաջացնում, իսկ յետոյ նորան այնպէս թուեցաւ, որ

ոտք ու ձեռքով խօսող բժիշկը հարուածներ է տեղում
իւր գլխին ձեռքին բռնած գլխարկով։

— Սուտ է, — ասաց նա կամացուկ և աղեսող ձա-
նով։ — Մարդիկների համար ես շատ ու շատ լաւ բաներ
եմ արել, ինքներդ գիտէք արդ։

— Դէ բաւական է վերջապէս, — գոռաց բժիշկը։

Միթէ դուք դեռ ևս ձեր բարեգործական արարքները
ինչոր լուրջ և օգտակար բան էք համարում և ոչ
ծրտի-պրտի տիկնախաղ։ Զէ որ այդ բոլորը՝ սկզբից
մինչ վերջ «օլինբազութիւն» էր, այդ մի տեսակ ասիրի-
սիրի» խաղալ էր գէպի ընկերը, մերձաւորը, մի այն-
պիսի «ափ աշկարար խաղ, որ նոյն իսկ երեխաներն ու
լիմար պառաւներն էլ էին հասկանում։ Վեր առնենք
հէնց, օրինակի համար, ձեր այն, — ինչպէս է անունը
— անտէր-անտիրական պառաւների ապաստանարանը, ուր
ինձ ստիպել էք ինչոր գլխաւոր բժշկի դեր ստանձնել,
իսկ դուք էլ եղել էք պատուաւոր-խնամակտլուհի։ Ա՛խ,
ծէր իմ Աստուած, ինչ հրաշալի հաստատութիւն էր...
կառուցել էին նաշխուն յատակով տուն, կտրին էլ մի
հողմաղաց տնկել, հաւաքել էին գիւղերից մի սասը պա-
ռաւ և ստիպում էին քնել նուրբ աղուամազէ վերմակ-
ների տակ, հոլլանդական քաթանի սաւանների վրալ և
շաքարեղէն անուշ անել...»

Եւ բժիշկը չարախնդաց կերպով փոթկացրեց գըլ-
խարկի մէջ և շարունակեց շտապ, կակագելով։

— Ա՛ օյին էր։ Ապաստանարանի ծառաները թագ-
ցնում, փակում էին աղուամազ վերմակներն ու սաւան-
ները, որպէս այդ «ջագուաները չկեղտոտէին, — գլուխ-
ները քարը, թող յատակին քնեն այդ «օլի բուռնութա-
մանները, Պառաւը չէր համարձակում ոչ մահճակա-
լի վրալ նստել, ոչ կրկնոցը հագնել, ոչ լղկած յատա-
կի վրալ ման գալ։ Ամեն ինչ պահւում էր հանդիսի
համար և գաղուում էր պառաւներից, ինչպէս գողերից,
իսկ պառաւներն էլ սուս ու փուս ապրում և հագն.
տում էին ողորմութիւն մուրալով և օր ու գիշեր Աս-
տուած էին կանչում, թէ երբ պիտի ազատուին օր
առաջ այդ բանտարկութիւնից և այն լղիացած, կուշա-
անզգամների հոգեշահ քարոզներից, որոնց դուք հաւա-

տացել էիք պառաւների վերակացութիւնը։ Խսկ բարձր պաշտօնեաներն ինչ էին անում։ Պատմելու բան է միայն։ Նաբաթը մի-երկու անգամ, երեկոները երեսուն հինգ հազար սուրհանդակ կվազէր և կլայտնէր, որ վաղն իշխանուհին, -- այսինքն գուք, — պիտի ապաստանարան գալ։ Այդ կնշանակէր վաղը բոլոր հիւանդներին պէտք էր թողնել Աստուծոյ լուսով, զուգուել-զարդարուել և հանդիսի գնալ։ Լաւ. գալիս եմ։ Պառաւներին հաջցրել, զուգել-զարդարել են, ամեն ինչ մաքուր, նոր և շարքով՝ շարէ-շար կանգնեցնել. սպասում են խեղճերը։ Նոցա մօտ գէս ու գէն է գնում-գալիս պաշտօնաթող, պահականոցի «Ճեր-աղուէսը» — վերակացուն իւր քաղցմեղց, ստորաքարշ ժայիտն երեսին։ Պառաւները յօրանջում են և իրար են նալում, բայց ով կարող է ծպտուն հանել, տրանշալ։ Սպասում ենք։ Ահա գլխապատառ ներս վաղեց կրտսեր-կառավարիչը։ Նորանից մի կէս ժամ յետոյ աւագ-կառավարիչը, յետոյ գլխաւոր կառավարիչը, որի ձեռքին է տնտեսութիւնը, յետոյ էլի մի ուրիշը, նորանից յետոյ էլի մէկը... գալիս են հա... անվերջ։ Ամենքն էլ խորհրդաւոր, հանդիսաւոր «ուեխաներով»։ Սպասում ենք, սպասում, ոտքներս գնում, վերցնում, նորից գնում, ժամացոյից նալում, - և այս բոլորը մեռելալին լոււթեանմէջ, որովհետեւ ամենքս էլ ատելով ատում ենք միմեանց և իրար արիւն խմում։ Անցնում է էլի մի ժամ, միւսն էլ և ահա, վերջապէս, հեռւում երևում է փառաւոր կառքը և... և... եկաւ... «ինքը»...

Բժիշկը քրքչաց բարակ ծիծաղով և բարակ ձարնով շարունակեց.

— Դուք ելնում էք կառքից և «ջագու-պառաւները» «Ճեր-աղուէսի» նշանով սկսում են երգել. — «Որչափ հրաշալի է մեր Տէրը Սիօնում, ոչ մի լեզուով չի պատմուիր»... Վատ չէ, հա.

Բժիշկը ծիծաղեց բամբ ձալնով և ձեռքով այնպիսի շարժում արեց, որով կամենում էր ցոյց տալ, թէ ծիծաղից խօսել չէ կարող։ Նորա ծիծաղը ծանը էր, ազգու. ծիծաղում էր սխմուած ատամներով, ինչպէս ծիծաղում են չար մարդիկ. և նորա ձալնից, փալլող և

փոքր ինչ յանդուգն աչքերից կարելի էր գուշակել, որ
նա ատելով ատում էր թէ իշխանուհուն, թէ ապաս-
տանարանը և թէ պառաւներին։ Այն բոլորի մէջ, ինչ
որ նա այնքան անշնորհք և կոպտութեամբ պատմում
էր, ոչ մի ծիծաղաշարժ և ուրախառիթ բան չկար,
բայց նա ծիծաղում էր հաճոյքով և մի առանձին բա-
ւականութեամբ։

— Իսկ դպրոցը, — շարունակեց նա ծիծաղից ծանր
շունչ քաշելով։ — Թիշնում էք, դուք ինքներդ էիք կա-
մենում գիւղացիների որդիներին դաս տալ։ Երեկի, շատ
լաւ էիք դաս տալիս, որովհետև կարճ ժամանակից լե-
տոյ բոլոր երեխաները մէկ-մէկ փոխան, այնպէս որ լե-
տոյ ստիպուած էին «զորս դու պատուիրեցեր»ի դիմել
կամ փողով վարձել, որ դպրոց գտալին։ Իսկ լիշում էք
թէ՝ ինչպէս ցանկութիւն ունէինք ձեր ձեռքով «ամ-
զուկով» կերակրել դաշտում բանող գեղջկուհիների զա-
ւակներին։ Դուք շրջում էիք գիւղում և աղիողորմ լա-
լիս, որ փոքրներին գիւղում չեն թողել, — մայրերն ա-
մենքը վերցրել դաշտ էին տարել իրենց հետ։ Յետոյ
տանուտէրը հրամայեց մայլերին, որ հերթով իրենց
զաւակներին թողնեն տանը՝ որ դուք զուարճանաք։
Զարմանալի՞ բան։ Ամենքն էլ փախչում էին ձեր բա-
րերարութիւններից, ինչպէս մկները կատուից։ Բայց
ինչու նատ պարզ է։ Պատճառն այն չէր, որ մեր ժո-
ղովուրդը տգէտ է և ապերախտ, ինչպէս դուք էիք
բացատրում միշտ, այլ այն, որ ձեր բոլոր ոլինբազու-
թիւնների մէջ, — ներեցէք խնդրեմ արտալայտութեանս
համար, — մի գրոշի անգամ սէր, գթասրառութիւն չը-
կսր, «անջիգեարօ էր։ Միայն մի ցանկութիւն կար, —
զուարճանալ կենդանի «իմամաջութիւններով և՝ ուրիշ ո-
չինչ... Ով չէ կարող զանազանել մարդիկներին սենեա-
կի փոքրիկ շներից, նա իրաւունք չունի բարեգործու-
թեամբ զբաղուելու։ Հաւատացնում եմ ձեզ, մարդիկ-
ների և ալդ շների մէջ — մեծ զանազանութիւն կայ...»

Իշխանուհու սիրտը սաստիկ բարախում էր. նորա
ականջները խշում էին և նորան այնպէս էր թւում
թէ բժիշկը դեռ ևս շարունակում է գլխարկով անդա-
դար հարուածներ աեղալ իւր գլխին։ Բժիշկը խօսում

էր արագ, տաք-տաք և "չ-գեղեցիկ, կտկաղելով և աւելորդ շարժումներով։ Նորա համար մի բան միայն պարզ էր, որ իւր հետ խօսում է գուեհիկ, անկիրթ, չարա-սիրտ, ապերախտի մէկը, բայց թէ ինչ էր ուզում ի-րենից և ինչք մասին էր խօսում—նա չէր ըմբռնում։

— Հեռացէք,— ասաց նա լացակումած ձայնով, ձեռները վեր բարձրացնելով և գլուխը պաշտպանելով քժշկի գլխարկից։ — Հեռացէք։

— Իսկ ինչպէս էիք վարւում ձեր պաշտօնեաների հետ, — շարունակում էր իւր զալրովիթը թափել բժիշկը։ — Դուք նոցա մարդ չէք հաշւում և տանջում էք ինչպէս վերջին սրիկալին կտանջեն։ Օրինակ, ներելի լինի հարցնել՝ ինչ պատճառով արձակեցիք ինձ։ Տասը տարի ձեր հօրն եմ ծառալել, յետոյ էլ ձեզ, չհարցնելով՝ ոչ տօն, ոչ հանգիստ ու արձակուրդ, հարիւր վերստ տարածութեան վրայ բոլորի սէրը գրաւած, և լանկարծ մի գեղեցիկ օր ինձ լալտնում են, որ ես այլ ևս պաշտօն չունիմ։ Ախր ինչո՞ւ, Մինչեւ այժմ էլ չեմ կարողանում բացատրել, ես՝ աւտգ բժիշկս, ազնուական, Մոսկուալի համալսարանի ուսանող, ընտանիքի հալը, այնպիսի չնչին ու մանր մժեղ եմ, որ կարելի է զզակոթին տալով դուրս քշել, առանց պատճառն իսկ բացատրելու։ Ինչ կալ ինձ հետ ընազ ու տուզա անել։ Ես յետոյ լըսեցի, որ կինս, ինձնից ծածուկ, գաղտնագողի երկուերեք անդամ եկել է ինզըրելու ինձ համար և դուք նորան ոչ մի անգամ չէք ընդունել։ Ասում են նախասենեակում լաց է եղել. . Երբէք ես չեմ կարող ներել հանգուցեալիս այդ բանը։ Երբէք։

Բժիշկը լոեց. ատամները սիմել էր և լարուած մտածում էր, թէ էլ ինչ ասէ, մի շատ անհաճոյ, վրեժառու բան։ Նա ինչոր բան մտաբերեց և նրա մւայլ, սառը դէմքը լանկարծ փալլեց։

— Վերցնենք հէնց ձեր լարաբերութիւնն այս վանքի հետ, վրայ տուեց նա ագահօրէն։ — Դուք երբէք ոչ ոքի չէք խնալի և որչափ սուրբ է վալրը, այնչափ աւելի յուս կալ, որ ձեր գթասրտութիւնն ու հրեշտակալին հեղութիւնը «չամչի գին» կշուարէ։ Ի՞նչու էք գալիս այստեղ։ Ի՞նչ գործ ունիք վանականների հետ,

թոլլ տուէք հարցնել։ Դուք ով Նեկուբայի համար,
կամ նա ով ձեզ համար։ Դարձեալ նոր զբօսանք,
խաղ, սրբապղծութիւն դէպի մարդկալին անձնաւորու-
թիւնը և ուրիշ ոչինչ։ ԶԵ որ դուք վանականների
Աստծուն չէք հաւատում, դուք ձեր սրտում ձեր սե-
փական Աստուածն ունիք, որին ճարել էք հոգե-
հարցութեան փորձերի ժամանակ ձեր սեփական խել-
քով։ եկեղեցական արարողութիւններին ու ծէսերին
նայում էք ներողամտաբար, պատարագի և գիշերապաշ-
տօնի չէք գնում, քնում էք մինչև կէսօր... Էլ ուրեմն
Բնչու էք գալիս այստեղ... Ուրիշի տունն էք մտնում
ձեր Աստուծով և երեսակալում էք, որ վանքը իւր հա-
մար ալդ մի շատ մեծ պատիւ է համարում։ Ուն չէ։
Հապա մի հարցրէք, ի միջի ալլոց, Բնչ է նստում
վանականներին ձեր ալցելութիւնները։ Դուք բարեհա-
ճել էք ալստեղ գալ այս երեկոյ, իսկ երէկ չէ մէկէլ
օրը ձեր կառավարչի կողմից ուղարկուած սուրհանդա-
կըն էր ալստեղ, որպէս զի նախազգուշացնէ թէ դուք
պատրաստում էք գալու։ Երէկ ամբողջ օրը
ձեղ համար պատրաստութիւններ էին տեսնում և սպա-
սում։ Ալսօր հասաւ յառաջապահ գունդը — մի երես ա-
ռած, պրտկերես նաժիշտ, որ հէնց այն է վազվզում է
բակի միջով դէս ու դէն, խշխացնելով իւր շրջազգեստը,
գլուխ է տանում իւր հարցերով, կարգադրութիւններ է
անում...տանել չեմ կարող ալդպիսի բաներ։ Ալսօր ամբողջ
օրը վանականները ոտքի վրայ են սպասողական դրու-
թեան մէջ, — ախը չէ որ եթէ ձեղ առօք փառօք ըն-
դունեն, վայն եկել տարել է նոցա։ Առաջնորդին կը-
գանգատուէք։ «Ձերդ սրբազնութիւն, վանականներն
ինձ չեն սիրում։ Զգիտեմ որ մեղքիս համար զալլացել
են վրաս։ Ճշմարիտ է, ես շատ մեծ մեղքերի տէր եմ,
բայց չէ որ այնքան թշուառ եմ։ Նենց ինքը վանքը
որքան վնասներ է կրել ձեր երեսից։ Վանահալը բազ-
մազբաղ մարդ է, գիտնական։ Նա քիթ սրբելու ժամա-
նակ չունի, իսկ դուք ամեն բոպէ ձեր սենեակն էք
կանչում նորան։ Ոչ մի յարգանք ու պատկառանք ոչ
դէպի տարիքը, ոչ աստիճանը։ Գոնէ որև է բան ըն-
ծալէք, այնքան էլ վիրաւորական չէր լինի. իսկ ալս-

քան ժամանակ վանականները ձեղնից մի հարիւր ըուբ-
լի էլ չեն ստացել...

Երբ որ իշխանուհուն անհանգստացնում էին, կամ
չէին կամենում հասկանալ նորան, վիրաւորում էին և
ալդպիօթ ժամանակ չգիտէր թէ բնչ անէր, նա սկսում
էր լաց լինել: Ալժմ էլ վերջ ի վերջով, նա դէմքը
ծածկեց և սկսեց լալ՝ մանկական, բարակ ձայնով: Թիշ-
կը լանկարծ լոեց և նալեց նորան: Նորա դէմքը մոալ-
լացաւ և դաժան կերպարանք ստացաւ:

— Ներեցէք ինձ, խնդրեմ, իշխանուհի, — տսաց նա
խուլ ձայնով: — Ես տարուեցաւ իմ չար զգացումներով
և ինքս ինձ մոռացաւ: Արածս լաւ բան չէ:

Եւ, ամաչելով հազարով, մոռացաւ գլխարկը գլուխը
դնել ու շտապի քայլերով հեռացաւ իշխանուհուց:

Աստղերն արդէն առփայլում էին երկնքում: Երեկ
վանքի միւս կողմում լուսինն արդէն դուրս էր գալիս
որովհետեւ երկինքը պայծառ, շինչ և քնքոյշ էր: Վան-
քի սպիտակ պարսպի երկալնութեամբ չղջիկներն էին
սուրում անձալն լետ ու առաջ:

Ժամացոյցը զարկեց ինչ-որ ժամի երեք-քառորդը.
Երեկի, ինը ժամինն էր: Իշխանուհին ելաւ և յամրա-
քալ գիմեց դէպի դարպասը: Նա իրեն իիստ վիրաւո-
րուած էր զգում և լալիս էր և այնպէս էր թւում իրեն,
որ թէ ծառերը, թէ աստղերը. թէ շղջիկները խղճում
էին իրեն, և ժամացոյցն էլ մեղմիկ զարկեց լոկ միայն
նրա համար, որ իւր վշտակցութիւնն արտալատէր:
Նա լալիս և մտածում էր այն մասին, թէ լաւ կլինէր
վերջնականապէս վանք քաշուէր, — ամառուալ խաղաղ
երեկոները կզօսնէր մեն-մենակ ծառուղիներում, վի-
րաւոր սրտով, վշտացած, չըմբռնուած շրջապատզնե-
րից, և միայն Աստուած և աստղալից երկինքը կտես-
նէին վշտահարի արցունքները: Եկեղեցում դեռ ևս
շարունակում էր գիշերապաշտօնը: Իշխանուհին մի
ըսպէ կանգ առաւ և ականջ դրեց երգեցողութեանը.
որքան հրաշալի էր ալդ երգեցողութիւնը խաղաղ, խա-
ւար օդի մէջ: Որքան քաղցը է ալդ երգեցողութեան
ներդաշնակութեամբ լալ ու աշնջուել:

Գալով իւր սենեակները, նա հայելու մէջ դիտեց

իւր արտասուտաթոր դէմքը, մի քիչ փոշոտեց և լետոյ նստեց ընթրելու։ Վանականները գիտէին, որ ինքը սիրում է մժուժ դրած զութիսի, մանը սոկոն, մալագալի գինի և հասարակ մեղրախառն կարկանդակ, որից բերնի մէջ մի տեսակ նոճենու բոլը է տարածւում, և ամեն գալուս, այդ բոլորը պատրաստւում և հրամցւում էր իրեն։ Անուշ անելով սոկոնները և վրան մալագա խմելով իշխանուհին միւնոյն ժամանակ երեւակալում էր, թէ ինչպէս վերջնականապէս քարուքանդ կանեն իրեն և երեսից կձգեն իւր բոլոր կառավարիչները, գործակատարները, գրասենեակի ծառալողներն ու աղախինները, որոնց համար ալնքան բարիք է արել, կդաւաճանեն և կուսեն կոպտութիւններ ասել իւր երեսին, ինչպէս աշխարհիս երեսին ապրող բոլոր մարդիկ կուսեն յարձակուել իւր վրայ, չարախօսել, ծիծաղել, ծաղրել. ինքը կհրաժարուի իւր իշխանական տիտղոսից, շուշք ու ճոխութիւնից և հասարակութիւնից, կքաշուի մի վանք և ոչ մէկին մի կծու, յանդիմանական խօսք էլ չի ասիլ, կաղօթէ իւր թշնամիների համար և այն ժամանակ, յանկարծ, ամենքը կզգան իրենց սխալը, կըմբռնեն նորան, իւր մօտ կդան ներողաթիւն խնդրելու, բայց արդէն ուշ կլինի...

Իսկ ընթրէից լետոյ նա անկիւնում ծունկի եկաւ պատկերի առաջ և կարդաց Աւետարանից երկու գլուխ։ Ցետոյ աղախինը անկողինը յարդարեց և նա պառկեց քնելու։ Ճերմակ ստանի տակ ձգուելով, նա խոր ու անուշ հոգոց հանեց, ինչպէս սովորաբար անում են լացից լետոյ, տչքերը փակեց և սկսեց նիշհել...

Առաւոտեան արթնացաւ և նալեց իւր փոքրիկ ժամացոյին. ութ և կէսն էր։ Մահճակալի մօտ եղած գորգի վրայ ձգուում էր լուսի նեղ ու երկարաւուն, պալծառ շող, որ ընկել էր լուսամուտից և հաղիւ-հազ լուսաւորում էր սենեակը։ Լուսամտի մութ վարագոյրել լետեը ճանճերը բզզում էին։

—Դեռ կանուխ է, —մտածեց իշխանուհին և աչքերը փակեց։

Զգուելով անկողնում, նա մտաբերեց երեկուալ բժշկի հետ ունեցած հանդիպումը և այն

բոլոր մտքերը, որոնց ազգեցութեան տակ նա քնեց երէկ երեկօյեան. մտաբերեց, որ ինքն անբաղդ է. Յետոյ լիշողութեան մէջ զարթնեց Պետերբուրգում ապրող ամուսինը, կառավարիչները, բժիշկները, հարևանները, ծանօթ աստիճանաւորները... Այլ մարդկանց ծանօթ դէմքերի մի ամբողջ շարք անցաւ նորա երեակալութեան մէջ: Նա ժպանց և մտածեց, որ եթէ նոքա կարողանալին թափանցել իւր հոգին և ըմբռնել իրեն, ապա ամենքն ևս իւր ոտքերի առաջ կլինէին...

Ժամը տասնեմէկ ու քառորդին նա կանչեց աղախնին:

— Օգնեցէք, հագնուելու, — ասաց նա թախծալից: — Սակայն, նախ գնացէք ասացէք, որ կառքը լծեն: Պէտք է երթալ Կլաւդիա Նիկոլայևնալին ալցելութեան:

Ելնելով բնակրանից, կառք նստելու համար, նա աչքերը կկոցեց ցերեկուալ պալծառ լրսից և ծիծաղեց հրճուանքից, — հիանալի օր էր: Նալելով կկոցած աչքերով վանականներին, որոնք ժողովուել էին պատշամբի առաջ նորան ճանապարհ գնելու նա սիրալիր ողջունեց նոցա և ասաց.

— Մնաք բարե, բարեկամներս: Ցտեսութիւն մինչ միւս օրը:

Նա հրճուական զարմանք զգաց տեսնելով, որ վանականների հետ էր ալնտեղ և բժիշկը: Նորա դէմքը դժգուն էր և մոալլ:

— Իշխանուհի, — ասաց նա գլխարկը հանելով և մեղաւորի դէմքով ժպտալով, — ես վաղուց արդէն սպասում եմ ձեզ ալստեղ: Ներեցէք ի սէր Աստուծոյ... Երէկ վրիժառու, քինախնդիր ոգուց տարուցայ և լիմարութիւններ ասացի: Մի խօսքով՝ ներողութիւն եմ խնդրում:

Իշխանուհին սիրալիր ժպտակեց և նորա շրթունքներին մօտեցրեց իւր ձեռքը: Նա հայրուրեց և կարմրտակեց:

Աշխատելով ժռչնակի նմանել, իշխանից թռաւ կառքի մէջ և գլխով ամեն կողմ ողջունեց: Նորա հոգին ուրախութեամբ էր համակուած, ալնտեղ տիրում էր ջերմութիւն ու պալծառութիւն և նա ինքն ևս զգում

էր, որ իւր ժպիտն անօրինակ քնքշանք ու անուշութիւն ունի: Յետոյ երբ կառքը դէպի զարբասը ոլացաւ, երբ փոշոտ ճանապարհով անցնում էր խրճիթների և տների, գիւղացիների սալերի անվերջ շարքի և նոյնպէս մի անվերջ շարք ուխտաւորների մօտով, որոնք վանք էին դիմում,—նա դեռ ևս շարունակում էր կկոցել և անուշ ժպտալ: Պատահող գիւղացիները գլուխ էին տալիս նորան, կառքը մեղմ օրօրում էր, անիւների տակից փոշու քուլաներ էին բարձրանում, որ քամին ոսկեգոլն հաճարի արտերի վրայ էր ցանում և իշխանուհուն ալնպէս էր թւում, որ իւր մարմինը ոչ թէ կառքի բարձերի, այլ ամպերի վրայ է ճօնւում և որ ինքն էլ նման է թեթև, բարակ ամպի քուլալի...
—Որչափ բաղտաւոր եմ,—շշնչում էր նա, աչքերը գոցելով:—Որչափ բաղտաւոր եմ...

8. Ա.

